

ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐԶ⁴⁶

Աղաջանյան Արա

Բանալի բառեր` հմտություններ, կրթական ծառայություններ, կարողություններ, աշխատուժի շուկա, գործատու

Կրթական ծառայությունների մատուցման շուկայում աստիճանաբար նկատվում է մրցակցության թեժացում ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Համալսարանի շրջանավարտը, դեռևս որպես բուհի դիմորդ հանդես գալով, պետք է համոզմունք ունենա, որ տվյալ մասնագիտության գծով պահանջված է լինելու աշխատաշուկայում: Այս առումով, համալսարանները մրցակցային դիրքեր ապահովելիս, ուշադրություն են դարձնում ուսումնառության թիրախավորված վերջնարդյունքերին կրթության կազմակերպմանը, երբ կրթությունը ամբողջովին հասցեագրվում է աշխատաշուկայի պահանջներին:

Փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն մասնագիտությամբ շրջանավարտների գործազրկության շարժառիթների չարքում, տնտեսական ձգնաժամներից բացի, կարևոր պատճառ կարող է լինել ուսումնառության ընթացքում մասնագետի հմտությունների և կարողությունների անհապատասխանությունը գործատուի պահանջներին: Այս առումով համալսարանները պետք է ձգտեն հնարավորինս ուսումնառության վերջնարդյունքներն ուղղորդելու մասնագետի այն հմտություններին և կարողություններին, որոնք պահանջվում են մասնագիտական կրթական առաջին կամ երկրորդ մակարդակում:

Եվ խնդիրը միայն այն չէ, որ շրջանավարտ մասնագետը կարող է չունենալ բավարար հմտությունների կամ կարողությունների ընդգրկում շրջանակ և դրանով իսկ պահանջված չլինել գործատուի կողմից: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ կրթության ընթացքում ձեռք բերած մասնագիտական հմտությունների լայն շրջանակը չի բավարարում գործատուին, քանի որ այն «գերհագեցած է» և որոշակիորեն կիրառելի չէ աշխատանքի ընթացքում: Եվ ստացվում է այնպես, որ այդ պարագայում բակալավրիատի, կամ մագիստրատուրայի շրջանավարտները գործատուների կողմից գնահատվում են «գերորակավորված» և արդյունքում` աշխատանքի չեն անցնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արևմտյան Եվրոպայի համալսարանական գործազուրկ շրջանավարտների շրջանում գործատուի համար «գերորակավորում» ունեցող երիտասարդ մասնագետների տեսա-կարար կշիռը տատանվում 14-35% միջակայքում [1]:

Այդ իրավիճակը ավելի սուր բնույթ է ստանում Հայաստանի Հանրապետությունում, քանի որ, ըստ պաշտոնական վիճակագրության, վերջին տարիներին գործազուրկների մեջ առավել մեծ թվաքանակ են կազմում բարձրագույն կրթությամբ անձինք, որոնք ունեն կրթական ցենզի բարձր մակարդակ և իրենց մասնագիտական հմտությունների ու կարողությունների որակով գերազանցում են գործատուների պահանջմունքների մակարդակը, և վերջիններիս կողմից գնահատվելով «գերորակավորված»` պարզապես աշխատանքի առաջարկ չեն ստանում:

Այս առումով` կարծիք է հայտնվում, որ, չնայած ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի որոշակի ձեռքբերումներին, իրականացված բարեփոխումները հիմնականում դեռևս

⁴⁶ Հոդվածն ընդունվել է 16.02.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել տ.գ.դ., պրոֆ.Ա. Ճուղուրյանը

առնչվում են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական ծրագրերի բովանդակությանը և որակին [2]: Դրանք իրենց հերթին բերում են նրան, որ կրթական համակարգը, ընդհանուր առմամբ, դեռևս չարունակում է «կտրված» մնալ աշխատուշակայից և ԲՍԽԴՅԻՀ հաշվի չեն առնում գործատուների պահանջները: Մասնագիտական կրթական ծրագրերը հաճախ գերհագեցած են լինում շրջանավարտներից պահանջվող հմտություններին ու կարողություններին ուղղակիորեն չառնչվող դասվանդվող առարկաներով, կամ էլ չեն ընդգրկում արդիական այնպիսի առարկաներ, որոնք կգարգացնեին այսօրվա շրջանավարտի կոմպետենցիաները՝ հասցեագրաված գործատուի պահանջներին [3]:

Այս ճանապարհով հնարավոր կլինի բեռնաթափվելու ուսումնական ծրագիրը գերծանրաբեռնող, անուղղակի առարկաներից՝ փոխարենը ուսումնառության գործընթացում ընդգրկելով աշխատաշուկայի պահանջարկը բավարարող վերջարդյունքներով նոր առարկաներ: Ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումը աշխատաշուկայի պահանջներին մեծապես կբարձրացնի մասնագիտական կրթական համակարգում բարելավումների արդյունավետությունը:

Մասնագիտական կրթության մրցունակության բարձրացման ուղենիշ պետք է համարել նաև ստեղծարար մտածելակերպի ձևավորումը ուսանողության շրջանում: Փորձը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում կազմակերպվող բակա-լավիրատի կամ մագիստրատուրայի ծրագրերը զուրկ են ինովացիոն բովանդակությունից: Ուսանողական և պրոֆեսորադասախոսական կազմի որոշ մասի մոտ դեռևս գերակշռում են կրթական գործընթացի մեխանիկական ընկալումները, երբ ուսումնառությունը դեռևս դիտվում է որպես դասախոսության միջոցով գիտելիք փոխանցելու և այնուհետև՝ քննության ընթացքում այն ստուգելու գործողություն:

Հետևաբար այս պարագայում կրթական գործընթացը դասախոսների և ուսանողական համակազմի մի մասը դեռևս չարունակում է դիտարկել որպես գիտելիք, տեղեկություն փոխանցելուն, այլ ոչ թե մտածողություն ձևավորելուն ուղղված գործընթաց: Սակայն, համալսարանի այսօրվա շրջանավարտի կոմպետենցիաների շրջանակում կարևորվում են ոչ միայն մասնագիտական գիտելիքները, այլև նրա ստեղծարարության, նորարարության հակումներին ինքնա-դրսևորման կարողությունները:

Ուստի այսօր մրցակցային են համարվում այն կրթական ծրագրերը, որոնց վերջանրդյունքներով ձևավորվում են ոչ միայն «գիտակ», այլև «ստեղծարար հմտություններով» շրջանավարտներ: Այս առումով մասնագիտական կրթական ծրագրերում ներկայումս մեծ ուշադրություն պետք է դարձվի ուսանողի ոչ թե ձևական, այլ արդյունավետ անհատական աշխատանքի վերջանրդյունքներին՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնելու ստեղծարարությունը, նորարարությունը և ինքնադրսևորման կարողությունը:

Ներկայումս առավել արդիական է դառնում ուսանողակենտրոն ուսուցման պահանջը: Այսպես՝ որակի ապահովման չափորոշիչների և ուղեցույցի վերնայված տարբերակում հատուկ շեշտադրվում է ուսանողակենտրոն ուսուցման և գնա-հատման անհրաժեշտությանը: Հաստատությունները պետք է ապահովեն այնպիսի կրթական ծրագրեր, որոնցով խրախուսվում է ուսանողներին ունենալու ակտիվ դերակատարում ինչպես իրենց ուսուցման գործընթացի ձևավորմանը, այնպես էլ վերջնարդյունքների գնահատմանը [4]:

Հետևաբար ՀՀ բուհերը ներկայումս լուրջ ուշադրություն պետք է դարձնեն ուսանողների մոտիվացմանը՝ ուղղված նրանց ինքնակառավարման հմտությունների զար-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

գացմանը, ներգրավվածությանը ուսուցման գործընթացում: Ուսանողակենտրոն ուսուցման իրականացման պարագայում պահանջ է դրվում.

❖ հաշվի առնել ուսանողության կրթական կարիքների բազմազանությունը և ուղիներ որոնել ձկուն ուսումնառության համար,

❖ օգտագործել ուսումնամեթոդական և մանկավարժական ձկուն եղանակներ՝ շրջանցելով ավանդական «քարացած» մոտեցումները,

❖ ուսանողների կողմից պարբերաբար գնահատել և ճշգրտել կիրառվող մանկավարժական մեթոդների շրջանակը,

❖ ուղղորդել սովորողին դեպի ակադեմիական ազատություններ՝ ապահովելով ուսուցչի համարժեք աջակցություն.

❖ նպաստել փոխադարձ հարգանքի ծնավորումը սովորող-ուսուցիչ հարաբերությունների շրջանակում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. The European Higher Education Area in 2015: Implementation. Report, p. 182
2. Գաբրիելյան Ս., Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակարգ, // Բաց հասարակության հիմնադրամ Հայաստան:
3. Երիցյան Ս., Ճուղուրյան Ա., Բոլոնիայի գործընթացի ուղենիշները, Էդիթ Պրնթ, Եր., 2017, էջ 74-76
4. ESG, 2015, standard 1.3

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մրցունակ մասնագիտական կրթական ծրագրերի շուրջ Արա Աղաջանյան

Մրցակցային կրթական ծրագրեր ապահովելու նպատակով համալսարանները ներկայումս փորձում են կազմակերպել ուսումնական գործընթաց, որն ուղղված է գործատուի և աշխատաշուկայի կարիքներին: Այս նպատակով արդիական է դառնում վերանայել բարձրագույն կրթական ծրագրերը ուսանողական եւ ստեղծագործական մտածողության հիման վրա, ինչը թույլ կտա բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներին հեշտությամբ ինտեգրվել աշխատանքի շուկայում:

РЕЗЮМЕ

О конкурентоспособных профессиональных учебных програм Ара Агаджанян

Ключевые слова: навыки, образовательные услуги, рынок труда, компетенции.

С целью обеспечения конкурентоспособных образовательных программ в настоящее время, университеты стараются организовать учебный процесс, нацеленный на нужды работодателей и рынок труда. В статье предлагаются пути пересмотра вузовских образовательских программ на основе студенто-ориентированного и креативного мышления, что позволит выпускникам вузов легко интегрироваться в рынок труда.

SUMMARY
About Competitive Professional Educational Programs
Ara Aghajanyan

Keywords: skills, educational services, labor market, competences.

With the aim of providing competitive educational programs, universities are currently trying to organize a learning process aimed at the needs of the employer and the labor market. The article suggests ways to revise higher education programs on the basis of student oriented and creative thinking, which will allow the graduates of higher educational institutions to integrate easily in the labor market.